ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ԱՏՁՄ-ԳՀԱՊՁԲ-19/1 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Քաղ. Երևան «29» օգոստոսի 2019թ.

2019թ-ի օգոստոսի 14-29, ՀՀ, ք. Երևան, Հ. Հակոբյան 3, 3-րդ հարկ 301 սենյակ հասցեում՝ «Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» Հասարակական կազմակերպության (այսուհետ նաև «ԱՏՁՄ» ՀԿ) գրասենյակում տեղի ունեցավ ԱՏՁՄ-ԳՀԱՊՁԲ-19/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Արկադի Սահակյան	ԱՏՁՄ ՀԿ իրավաբան (հանձնաժողովի նախագահ).
Ասյա Սեփխանյան	ԱՏՁՄ ՀԿ միջոցառումների կազմակերպման մենեջեր.
Արթուր Ավետիսյան	ԱՏՁՄ ՀԿ միջոցառումների կազմակերպման մենեջեր.
Կարեն Մկրտչյան	«ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ ներկայացուցիչ (հանձնաժողովի քարտուղար):

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ա. Սահակյանը, իսկ քարտուղարն էր՝ Կ. Մկրտչյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ԱՏՁՄ-ԳՀԱՊՁԲ-19/1 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքների հաստատման մասին:
2. ԱՏՁՄ-ԳՀԱՊՁԲ-19/1 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարելու մասին:
3. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին:

1.ԱՏՁՄ-ԳՀԱՊՁԲ-19/1 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԻ՝ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Զեկուցեց քարտուղար Կ. Մկրտչյանը՝ հայտնելով, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրվել է ԱՏՁՄ-ԳՀԱՊՁԲ-19/1 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղը զբաղեցրած մասնակիցների ֆինանսական միջոցների հարցման մասին տեղեկատվություն, որը քարտուղարի կողմից ներկայացվել է հանձնաժողովի անդամներին:

Հանձնաժողովն արձանագրեց, որ.

ԱՏՁՄ-ԳՀԱՊՁԲ-19/1 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղը զբաղեցրած մասնակիցներ **«Արգավանդ Կահույք» ՍՊԸ**-ի և **«Ֆոտոն» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը չեն բավարարում հրավերով սահմանված պահանջներին՝ բացակայում են հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Որոշվեց՝

1. Քարտուղարին՝ ծանուցել մասնակիցներին առաջարկելով սահմանված կարգով շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Հանձնաժողովն արձանագրեց, որ մասնակիցների կողմից սահմանված կարգով շտկվել են անհամապատասխանությունները:

Որոշվեց՝

2. Հաստատել ԱՏՁՄ-ԳՀԱՊՁԲ-19/1 ծածկագրով գնմանն ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված հայտի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման հետևյալ արդյունքները.

1) **«Արգավանդ Կահույք» ՍՊԸ՝** բավարար.
2) **«Ֆոտոն» ՍՊԸ՝** բավարար.

Կողմ՝ 3
Դեմ՝ 0

2. ԱՏՁՄ-ԳՀԱՊՁԲ-19/1 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Որոշվեց՝

1. ԱՏՁՄ-ԳՀԱՊՁԲ-19/1 ծածկագրով գնման ընթացակարգի **1-ին, 2-րդ, 3-րդ** չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարել **«Ֆոտոն» ՍՊԸ**-ին:
2. ԱՏՁՄ-ԳՀԱՊՁԲ-19/1 ծածկագրով գնման ընթացակարգի **4-րդ** չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարել **«Արգավանդ Կահույք» ՍՊԸ**-ին:

Կողմ՝ 3
Դեմ՝ 0

3. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Կ. Մկրտչյանը ներկայացրեց պայմանգիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Որոշվեց՝

1. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 3
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Սահակյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. Սեփխանյան _____

Ա. Ավետիսյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Կ. Մկրտչյան _____